

ԱՅԲԲԵՆԱՐԱՆՆԵՐԻ ՑՈՒՑԱԴՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԻՆՏԵՐԱԿՏԻՎ ԽԱՂ-ՄՐՑՈՒՅԹ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆՈՒՄ

Մեպտեմբերի 4-ին, ժամը 14:00-ին Հայաստանի ազգային գրադարանի Թամանյանական մասնաշենքի մեծ ցուցասրահում կներկայացվեն Ազգային գրադարանի հարուստ ֆոնդերում պահվող տարբեր երկրներում, տարբեր ժամանակաշրջաններում տպագրված այբբենարանները: Գրադարանում կհյուրընկալվի գրող, թարգմանիչ, այբբենարանների հեղինակ Վաչագան Մարգարյանը: Այբբենարանների պատմության մասին նրա փոքրիկ դասախոսությունից հետո օրվա հերոսներ կդառնան գրադարանի փոքրիկ այցելուները՝ դպրոցականները: Նրանց համար եւ նրանց մասնակցությամբ կկազմակերպվեն ինտերակտիվ խաղեր, մրցույթներ, լավագույնները Վաչագան Մարգարյանի կողմից կարժանանան արժեքավոր մրցանակների: Միջոցառումը հատկապես հետաքրքիր եւ ուսուցողական կլինի տարրական դասարանների աշակերտների համար:

